

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.04.2021թ. թիվ 2112576579 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<14 >> 05 2021թ. 7-13- 7937

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Էդվարդ Ղարաբաղցյանի ՄԴ/34228-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ավ. Քալաշյան փողոցի 14 տան բնակիչ Էդվարդ Ղարաբաղցյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112576579 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը կայացված որոշման կապակցությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ **3.27՝ <<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանն արգելում է տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը:**

Նույն որոշման համաձայն՝ **3.16, 3.20, 3.22, 3.24, 3.26, 3.27, 3.28, 3.29 և 3.30 նշանների ազդեցությունը տարածվում է՝ նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում, խաչմերուկի բացակայության դեպքում, մինչև բնակավայրի վերջը:** Նշանների ազդեցությունը չի ընդհատվում հետադարձի և բաժանարար գոտու խզման, ինչպես նաև ճանապարհների մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112576579 որոշման հիմքում դրված տեսանյութի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Երևան

քաղաքի Խորհրդարանի փողոցի աջակողմյան հատվածում՝ իրավախախտումն արձանագրված վայրում տեղադրված են 3.27 <<Կանգառն արգելվում է>> և 8.2.4 <<Ազդման գոտի>> ճանապարհային նշանները:

Վարչական վարույթի շրջանակներում կատարված ուսումնասիրության պարզվել է նաև, որ <<BMW>> մակնիշի 95 XZ 995 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 2021թ.-ի մարտի 30-ին ժամը 15:47-ին Երևան քաղաքի Խորհրդարանի փողոցում՝ մասնավորապես իրավախախտումն արձանագրված վայրում՝ **կանգառ է կատարել 3.27՝ <<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանի ազդման գոտում:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Այսպիսով, հիմնավորվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին վերը նշված որոշումը իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.04.2021թ. թիվ 2112576579 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Էդվարդ Ղարաբաղյանին:



Ե. Կարապետյան